

ԾԱՆՈՒՑԱԳԻՐ

Հարգելի՛ Բաժնետեր (անվանատեր),

2026 թ. հունիսի 25-ին՝ ժամը 15:00-ին, տեղի է ունենալու «ԹԵԼ-ՍԵԼ» բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովը:

Ժողովն անցկացվելու է **բաժնետերերի ֆիզիկական և առցանց (հեռավար) մասնակցությամբ**.

- **Ֆիզիկական մասնակցության վայրը՝** «ՖՈՒԴՊԱՐԿ ԲԱՅ ԴԱՈՒՆԹԱՈՒՆ» (FOODPARK BY DOWNTOWN) կենտրոն (հասցե՝ ՀՀ, 0002, ք. Երևան, Իսակովի 11),
- **Առցանց մասնակցությունը՝** Ժողովի ուղիղ հեռարձակումը կիրականացվի **YouTube** հարթակի միջոցով:

ԺՈՂՈՎԻ ՕՐԱԿԱՐԳԸ՝

ՀԱՐՑ 1: «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-ի 2025 թ. տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին

ՀԱՐՑ 2: «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-ի արտաքին աուդիտի կողմից հաստատված Ընկերության 2025 թ. ֆինանսական հաշվետվությունները հաստատելու մասին

ՀԱՐՑ 3: «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-ի 2025 թ. տարեկան շահույթը բաշխելու մասին

ՀԱՐՑ 4: 2026 թ. գովազդային վիճակախաղի՝ 20,000,000 ՀՀ դրամի չափով տարեկան շահումային հիմնադրամ ստեղծելու մասին

ՀԱՐՑ 5: Կանոնադրության նոր խմբագրությունը հաստատելու մասին:

Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմվել է 2026 թ. մայիսի 29-ին ժամը 18:30-ի դրությամբ:

Օրակարգի վերաբերյալ բոլոր փաստաթղթերի հետ կարող եք ծանոթանալ ցանկացած աշխատանքային օր՝ ժամը 09:00-ից 18:00-ն, Ընկերության գրասենյակում հետևյալ հասցեով՝ ՀՀ, ք. Երևան, Հակոբ Հակոբյան փող., 3 շենք, 3-րդ հարկ (հիմնական մասնաշենքի 1-ին սեկցիայում), ինչպես նաև telcell.am կայքում: Ժողովի վերաբերյալ բոլոր փաստաթղթերը ուղարկվել են նաև Ձեր էլեկտրոնային փոստի հասցեին:

ՑԱՆԿ

«ԹԵԼ-ՍԵԼ» բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերին տրամադրվող տեղեկությունների և նյութերի

1. «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-ի 2025 թ. տարեկան հաշվետվությունը:
2. «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-ի 2025 թ. ֆինանսական հաշվետվությունը՝ հաստատված արտաքին աուդիտի կողմից:
3. Ժողովի օրակարգի հարցերի վերաբերյալ քվեաթերթիկ:
4. Օրակարգային հարցերի որոշումների նախագծերը:
5. Կանոնադրության նոր խմբագրության նախագիծը:

! Ժողովին ֆիզիկապես կամ առցանց մասնակցելու և քվեարկելու մանրամասն կարգին կարող եք ծանոթանալ հետևյալ [հղումով](#):

ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐ

ՀԱՐՑ 1: «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-ի 2025 թ. տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին

ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1-ին հարցի շրջանակներում բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի հաստատման են ներկայացվում Ընկերության տարեկան հաշվետվությունները: Դրանք ներառում են Գլխավոր տնօրենի և Խորհրդի նախագահի ուղերձները, 2025 թ. գործունեության ամփոփումն ու բիզնես արդյունքների նկարագիրը, ինչպես նաև Ընկերության ռազմավարությունն ու հետագա զարգացման հնարավոր միտումները: Ձեկույցում հստակ անդրադարձ է կատարվում հաշվետու տարվա էական իրադարձություններին, կազմակերպության նպատակներին, կայունության հաշվետվությանը, ինչպես նաև այն հիմնական ռիսկերին ու անորոշություններին, որոնց հետ առնչվում է Ընկերությունը: Ներկայացվող փաթեթում ներառված են նաև կորպորատիվ կառավարման զեկույցը և կորպորատիվ կառավարման տարեկան հայտարարագիրը:

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՈՐՈՇՈՒՄ N 1

Հաստատել «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-ի 2025 թ. տարեկան հաշվետվությունը:

ՀԱՐՑ 2: «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-ի արտաքին աուդիտի կողմից հաստատված Ընկերության 2025 թ. ֆինանսական հաշվետվությունները հաստատելու մասին

ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

2-րդ հարցի շրջանակներում բաժնետերերի հաստատման են ներկայացվելու Ընկերության արտաքին աուդիտորի («ԳՐԱՆԹ ԹՈՐՆԹՈՆ» ՓԲԸ) եզրակացությամբ 2025 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության համախմբված ֆինանսական հաշվետվությունները:

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՈՐՈՇՈՒՄ N 2

Հաստատել արտաքին աուդիտի եզրակացությամբ Ընկերության 2025 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ավարտվող ֆինանսական տարվա համախմբված ֆինանսական հաշվետվությունները:

ՀԱՐՑ 3: «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-ի 2025 թ. տարեկան շահույթը բաշխելու մասին

ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

3-րդ հարցի շրջանակներում բաժնետերերի հաստատման է ներկայացվելու Ընկերության 2025 թ. գործունեության արդյունքում ձևավորված շահույթի բաշխման հարցը: 2025 թ. շահույթը կազմել է 992,170,000 (ինը հարյուր ինսուներկու միլիոն հարյուր յոթանասուն հազար) ՀՀ դրամ: Տնօրենների խորհրդի 2026 թ. մայիսի 29-ին կայացված նիստով Խորհուրդը առաջարկում է բաժնետերերին վճարել ընդհանուր 767,140,000 (յոթ հարյուր վաթսուներկու միլիոն



հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ՝ շահույթի 77.32%-ը, այն է՝ յուրաքանչյուր 1 բաժնետոմսի դիմաց՝ 22 (քսաներկու) ՀՀ դրամ:

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՈՐՈՇՈՒՄ N 3

1. «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ 31.12.2025 թ. դրությամբ տարեկան ֆինանսական հաշվետվություններում արտացոլված 992,170,000 (ինը հարյուր իննսուներկու միլիոն հարյուր յոթանասուն հազար) ՀՀ դրամի չափով տարեկան զուտ շահույթից վճարել ընդհանուր 767,140,000 (յոթ հարյուր վաթսուներթ միլիոն հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ՝ որպես տարեկան շահութաբաժիններ, այն է՝ յուրաքանչյուր 1 բաժնետոմսի դիմաց՝ 22 (քսաներկու) ՀՀ դրամ:
2. Տարեկան շահութաբաժինների վճարումները կատարել առավելագույնը մինչև 25.07.2026 թ. ներառյալ, դրամական միանվագ փոխանցմամբ, «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող մասնակիցների ցուցակը կազմելու օրվա՝ 2026 թ. մայիսի 29-ի ժամը 18:30-ի դրությամբ Ընկերության մասնակիցների ռեեստրում ընդգրկված բաժնետերերին՝ կանոնադրական կապիտալում ունեցած մասնակցությանը համամասնորեն:
3. Շահութաբաժինները վճարելուց հետո մնացած շահույթը թողնել չբաշխված:

ՀԱՐՑ 4: 2026 թ. գովազդային վիճակախաղի՝ 20,000,000 ՀՀ դրամի չափով տարեկան շահումային հիմնադրամ ստեղծելու մասին

ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

«Վիճակախաղերի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ գովազդային վիճակախաղի շահումային ֆոնդն ամբողջությամբ ձևավորվում է նախորդ տարվա գործունեության արդյունքում ձևավորված զուտ շահույթի հաշվին, ուստի՝ հաշվի առնելով գովազդային վիճակախաղերի կարևորությունը Ընկերության ծառայությունների և բրենդի ճանաչելիության բարձրացման գործում՝ Խորհուրդը առաջարկում է ստեղծել Գովազդային վիճակախաղի տարեկան շահումային հիմնադրամ՝ 20,000,000 ՀՀ դրամի չափով, որի օգտագործման կարգը որոշում է Խորհուրդը:

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՈՐՈՇՈՒՄ N 4

Ստեղծել գովազդային վիճակախաղի տարեկան շահումային հիմնադրամ 20,000,000 ՀՀ դրամի չափով, որի օգտագործման կարգը որոշում է Խորհուրդը:

ՀԱՐՑ 5: Կանոնադրության նոր խմբագրությունը հաստատելու մասին

ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

Ընկերության կանոնադրության 4.5 և 4.7 կետերում կատարված փոփոխությունների առաջարկը պայմանավորված են ՀՀ Կենտրոնական բանկի «Վճարահաշվարկային կազմակերպությունների գործունեության կարգավորումը, վճարահաշվարկային կազմակերպությունների համար սահմանվող տնտեսական նորմատիվները, դրանց հաշվարկման կարգը» Կանոնակարգ 17/02-ում կատարված



փոփոխություններով, որոնք ուժի մեջ են մտնում 2026 թվականի սեպտեմբերի 1-ից: Քանի որ Ընկերությունը վճարահաշվարկային կազմակերպություն է, սույն նախագծով 4.5 կետից հանվել է պահուստային հիմնադրամին էմիսիոն միջոցների հատկացման դրույթը, և ավելացվել է նոր՝ 4.7 կետը, որով էմիսիոն եկամտի օգտագործումը սահմանափակվել է բացառապես անվճարունակության դեպքում կորուստների ծածկման, կապիտալի նվազեցման կամ բաժնետոմսերի անվանական արժեքի ավելացման դեպքերում՝ նպատակ ունենալով ապահովել էմիսիոն եկամտի ներառումը Ընկերության առաջին մակարդակի հիմնական կապիտալի կազմում:

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՈՐՈՇՈՒՄ N 5

Հաստատել Ընկերության կանոնադրության նոր խմբագրությունը:

